ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 15.04.2025թ. հ. 78-2025 գրության՝ Կենտրոն վարչական շրջանի Բուզանդի փողոց հ.97 և հ.99 հասցեներում կառուցվող վերելակի թույլտվության և բնակիչների համաձայնության վերաբերյալ փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ տեղեկացվում է.

Վերոնշյալ հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի «Բ» մասնաշենքի կառուցման համար կառուցապատող «ԲՅՈՒԶ» ՍՊ ընկերությանը 13.02.2013թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է 01/18-07/2-8916-128 նախագծման թույլտվությունը:

Այնուհետև, ՀՀ գործող օրենսդրության պահանջների համաձայն ենթարկված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխանությանը հավաստող փորձաքննությունների դրական եզրակացությունների հիման վրա 19.03.2014թ. Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցվել է հ.01/18-05/2-5342-202 նախագիծը և տրամադրվել հ.01/18-5342-256 շինարարության թույլտվությունը: ՀՀ կառավարության 2015թ. N596-Ն որշման դրույթների համաձայն՝ օրենքով սահմանված կարգով մի քանի անգամ համաձայնեցվել են աշխատանքային նախագծեր՝ 09.04.2015թ. հ.01/18-05/2-17193-226, 24.12.2020թ. հ.01/18-Վ-2484-1180, 23.08.2023թ. հ.01/18-Դ-97356-1666, 25.03.2024թ. հ.01/50-03-180-24 և տրամադրվել 31.03.2016թ. հ.01/18-Վ-254-233, 18.04.2019թ. հ.01/18-Վ-671-339 և 20.05.2020թ. հ.01/18-43774-611 շինարարության թույլտվությունները, որոնց ժամկետները նույն որոշմամբ սահմանված կարգի համաձայն և հիմք ընդունելով դիմումատուի կողմից Երևանի քաղաքապետարան մուտքագրված հայտերը՝ տարբեր ժամանակահատվածներում երկարաձգվել են երկարացման պահի դրությամբ չիրականացված աշխատանքների հաշվարկով:

Այնուհետև, 25.03.2024թ. Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցվել է հ.01/50-03-181-24 նախագիծը և տրամադրվել է հ.01/50-02-439-24 շինարարության թույլտվությունը:

Մետաղական աստիճանավանդակի և վերելակի կառուցման շինարարական աշխատանքներն իրականացվում են համաձայն 25.03.2024թ. տրված հ.01/50-02-439-24 շինարարության թույլտվության և հիշյալ հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի «Բ» մասնաշենքի կառուցման համար 25.03.2024թ. Երևանի քաղաքապետի հետ համաձայնեցված հ.01/50-03-181-24 նախագծի շրջանակներում:

Թույլտվության տրամադրման համար շենքի սեփականատերերի համաձայնությունը ստանալու պահանջը կարգավորվում է 07.05.2002թ. ՀՀ բազմաբնակարան շենքի կառավարման մասին ՀՕ-334 օրենքով սահմանված դրույթներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ